

ԼՈՒԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԻՆՔՆԱՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ Ա.Վ.

Եվրասիա միջազգային համալսարան,
Երևան, Հայաստանի

Սույն հոդվածը նվիրված է արդի տեխնոլոգիական փոփոխությունների պայմաններում լուելու իրավունքի և ինքնամեղադրանքի դեմ պաշտպանության վերաիմաստավորմանը: Վերլուծության առանցքում են քրեական դատավարության հիմնարար սկզբունքների վրա նեյրոտեխնոլոգիաների, մասնավորապես՝ «ուղեղ-համակարգիչ» ինտերֆեյսների և ֆունկցիոնալ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի ունեցած ազդեցության հիմնախնդիրները: Հոդվածում բացահայտվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում ձևավորված մոտեցման առանձնահատկությունները, համաձայն որոնց՝ ինքնամեղադրանքի դեմ պաշտպանությունը չի տարածվում անձի կամքից անկախ գոյություն ունեցող ապացույցների վրա, և վերլուծվում է, թե որքանով կարող են նեյրոտվյալները դասվել այդ կատեգորիային: Հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ նեյրոտեխնոլոգիաները թույլ են տալիս ստանալ ոչ միայն ֆիզիոլոգիական տեղեկատվություն, այլև տվյալներ, որոնք ընդունակ են կրելու ապացուցողական բովանդակություն, ինչը կասկածի տակ է դնում նյութական ապացույցների և ցուցմունքների միջև առկա ավանդական տարանջատումը: Աշխատանքում լուսաբանվում են հակադիր գիտական դիրքորոշումները, տրվել է դրանց գնահատականը և ցույց է տրվել, որ առկա իրավական անորոշությունը չի կարող հաղթահարվել առանց սկզբունքորեն նոր մոտեցումների մշակման: Հոդվածի եզրափակիչ մասում առաջարկվում են առանցքային իրավական երաշխիքներ՝ ուղղված մենտալ ինքնավարության և մենտալ գաղտնիության պաշտպանությանը՝ ընդգծելով, որ առանց դրանց ամրագրման, լուելու իրավունքն ու ինքնամեղադրանքի դեմ պաշտպանությունը կարող են կորցնել իրենց գործնական նշանակությունը:

Թղթակցական հասցեն՝ Աբրահամյան Անահիտ Վլադիկի, Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հայցորդ, (+374) 91 352249, email: anahit.abrahamyan2023@gmail.com

Բանալի բառեր. լռելու իրավունք, ինքնամեղադրանքի դեմ պաշտպանություն, արդար դատաքննություն, նեյրոսթենոլոգիաներ, «ուղեղ-համակարգիչ» ինտերֆեյս, ֆունկցիոնալ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա, մենտալ գաղտնիություն:

Ներածություն

Լռելու իրավունքը և ինքնամեղադրանքի դեմ պաշտպանությունը քրեական դատավարության առանցքային երաշխիքներից են: Թեև դրանք ուղղակիորեն ամրագրված չեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներում, այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական Դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) դրանք ճանաչել է որպես արդար դատաքննության հիմնարար բաղադրիչներ:

Այս իրավունքները բխում են այն սկզբունքից, որ պետությունը չի կարող անձին ստիպել՝ մասնակցելու սեփական մեղադրանքի ձևավորմանը: Պատմականորեն այս սկզբունքները զարգացել են ինկվիզիտորական մեթոդների դեմ արձագանքի արդյունքում, երբ հարկադրանքը դիտվում էր որպես ճշմարտության ձեռքբերման ընդունելի միջոց: Ժամանակակից իրավունքում, սակայն, արդար դատաքննությունը կառուցվում է հակառակ տրամաբանությամբ՝ մեղադրանքի բեռը դրվում է պետության վրա, իսկ մեղադրյալը պաշտպանված է հարկադրանքի մեթոդներով խոստովանությունների և տեղեկատվության կորզման վտանգից:

Սույն հոդվածի նպատակն է՝ նախ վերլուծել լռելու իրավունքի և ինքնամեղադրանքի դեմ պաշտպանության իրավական բովանդակությունը միջազգային իրավունքի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև ՄԻԵԿ) շրջանակում, և երկրորդ՝ ուսումնասիրել, թե ինչպես են թվային տեխնոլոգիաները և նեյրոհամակարգերը վերափոխում այս իրավունքները՝ առաջացնելով նոր իրավական և էթիկական մարտահրավերներ, և առաջարկել դրանց պաշտպանության հնարավոր մեխանիզմներ:

Հիմնական հետազոտություն

Լռելու իրավունքը և ինքնամեղադրանքի դեմ պաշտպանությունը ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի այն երաշխիքներից են, որոնք ուղղակիորեն ձևակերպված չեն Կոնվենցիայի տեքստում, սակայն ՄԻԵԴ-ի կողմից ճանաչվել են որպես դրա «ենթադրյալ» հիմնարար բաղադրիչներ: Funke v. France գործում Դատարանն առաջին անգամ հստակ արձանագրեց, որ մեղադրյալին չի կարելի հարկադրել համագործակցել սեփական մեղադրանքի ձևավորման հարցում [1]: Այս սկզբունքը հետագայում զարգացվեց Saunders v. the United Kingdom գործում, որտեղ ՄԻԵԴ-ը շեշտեց, որ 6-րդ հոդվածը միտված է պաշտպանել անձին պետական իշխանությունների կողմից հարկադրական մեթոդներից [2]:

Լռելու իրավունքը և ինքնամեղադրանքի դեմ պաշտպանությունը սերտորեն կապված են դատավարության արդարության ընդհանուր գաղափարի հետ: ՄԻԵԴ-ի մոտեցմամբ՝ մեղադրանքի կողմը պարտավոր է ապացուցել մեղավորությունը՝ առանց մեղադրյալին ստիպելու նպաստել սեփական դատապարտմանը [3]:

Այս երաշխիքներն առանձնահատուկ նշանակություն ունեն նախաքննության փուլում, երբ մեղադրյալը գտնվում է առավել խոցելի դիրքերում: John Murray v. the United Kingdom գործով ՄԻԵԴ-ն ընդունեց, որ որոշ դեպքերում մեղադրյալի լռությունից կարող են բխել որոշակի հետևություններ, սակայն միայն այն պայմանով, որ լռելը չի եղել դատապարտման հիմնական կամ վճռորոշ հիմքը և որ մեղադրյալը ունեցել է իրավական խորհրդատվության իրական հնարավորություն [4]: Անձի լռությունից արված հետևությունները թույլատրելի են միայն խիստ սահմանափակ դեպքերում: Մեղադրյալի լռությունից բացասական հետևություններ անելու հարցը պետք է գնահատվի գործի բոլոր հանգամանքների լույսի ներքո՝ հաշվի առնելով լռությունից արված հետևությունների կշիռը, իրավիճակում առկա հարկադրանքի աստիճանը և ընթացակարգային երաշխիքների առկայությունը [4]:

Հետաքրքրական է, որ ՄԻԵԴ-ի դիրքորոշման համաձայն ինքնամեղադրանքի դեմ պաշտպանության իրավունքը չի տարածվում բոլոր այն նյութերի վրա, որոնք հնարավոր է ստանալ անձից՝ հարկադրական լիազորությունների կիրառմամբ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է այնպիսի ապացույցներին, որոնք գոյություն ունեն մեղադրյալի կամքից անկախ և պայմանավորված չեն նրա մտավոր կամ հաղորդակցական ակտիվությամբ: Այսպիսի ապացույցների շարքին են դասվում, օրինակ, խուզարկության արդյունքում հայտնաբերված փաստաթղթերը, ինչպես նաև անձից վերցված շնչառության, արյան կամ մեզի նմուշները, կամ ԴՆԹ հետազոտության համար անհրաժեշտ կենսաբանական նյութերը [5]: Այս բացառությունը հատկապես կարևոր է սույն հետազոտության համար, քանի որ այն անմիջականորեն առնչվում է վերջին տարիների տեխնոլոգիական առաջընթացին, մասնավորապես՝ ուղեղ-համակարգիչ ինտերֆեյսների (Brain-Computer Interfaces, BCI) և ֆունկցիոնալ մագնիսական ռեզոնանսային պատկերագրման (fMRI) կիրառությանը, որոնք միտված են մարդու ուղեղային ակտիվության օրինաչափությունների հայտնաբերմանն ու վերլուծությանը: Այս տեխնոլոգիաները հաճախ ներկայացվում են որպես գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս ներթափանցել անձի ճանաչողական գործընթացների մեջ՝ բացահայտելով հիշողության բովանդակությունը և, որոշակի վերապահումներով, նույնիսկ այսպես կոչված «մտքի բովանդակությունը»: Այս համակարգերն էապես վերափոխեցին դատավարությունում ինքնամեղադրանքի ընկալումը: Ի տարբերություն ավանդական ստի դետեկտորների, որոնք հիմնականում չափում են սթրեսային ֆիզիոլոգիական արձագանքները, նորարարական այս մեթոդները փորձում են արձանագրել ուղեղային ակտիվության այնպիսի օրինաչափություններ, որոնք կապված են ճանաչման, հիշողության կամ

խաբեության հետ: Այսինքն, դրանք ոչ միայն արձանագրում են՝ արդյոք անձը հուզված է, այլ փորձում են պարզել՝ արդյոք որոշակի տեղեկատվություն առկա է նրա հիշողության մեջ: Արդյունքում ձևավորվում է ապացույցների նոր տեսակ, որը դժվար է դասակարգել դասական եղանակով: Հետևաբար առաջանում է հիմնարար իրավական հարցադրում. Արդյո՞ք նման տվյալները պետք է դիտարկվեն որպես անձի կամքից անկախ գոյություն ունեցող ապացույցներ, թե՛ որպես այնպիսի տեղեկատվություն, որի ստացումը անբաժանելիորեն կապված է անձի մտավոր ինքնավարության և գիտակցական գործընթացների հետ: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք հնարավոր է այս տեխնոլոգիաների միջոցով ստացվող տվյալները դասել նույն կատեգորիային, ինչ ԴՆԹ նմուշները կամ մատնահետքերը, թե դրանք իրենց բնույթով մոտ են այն ապացույցներին, որոնք պաշտպանվում են ինքնամեղադրանքի դեմ պաշտպանության շրջանակում:

Գիտական գրականությունում առկա է այն դիրքորոշումը, որ ուղեղային գործունեության վրա հիմնված ստի բացահայտման մեթոդները (brain-based lie detection) ենթադրում են մեղադրյալի ավելի ակտիվ մասնակցություն, քան, օրինակ, արյան նմուշի ստացումը: Մասնավորապես, նեյրոիմիջավորման դատաբժշկական կիրառության դեպքում անձից պահանջվում է կատարել որոշակի գործողություններ, օրինակ՝ դիտել կոնկրետ ապացույցներ կամ պատասխանել հարցերի, մինչդեռ նրա ուղեղային ակտիվությունը միաժամանակ արձանագրվում և վերլուծվում է [6]: Մյուս կողմից նշվում է, որ որոշ նեյրալ արձագանքներ կարող են դիտարկվել որպես ֆիզիոլոգիական ռեակցիաներ՝ նման մատնահետքերին կամ այլ «ոչ ցուցմունքային» ապացույցներին [7]:

Ավանդաբար ինքնամեղադրանքի դեմ պաշտպանությունը վերաբերում է այն տեղեկություններին, որոնք բխում են անձի մտքից (օրինակ՝ խոսքը կամ գրավոր հայտարարությունները), և չի տարածվում զուտ ֆիզիկական ապացույցների վրա (ինչպիսիք են մատնահետքերը կամ ԴՆԹ-ն): Սակայն նեյրոտեխնոլոգիաները այս սահմանազատումը դարձնում են խիստ խնդրահարույց [8]:

Այս հարցում առավել համոզիչ է թվում այն մոտեցումը, համաձայն որի նեյրոնային տվյալները չեն կարող անվերապահորեն նույնացվել դասական ֆիզիկական ապացույցների հետ: Եթե արյան նմուշի, ԴՆԹ-ի կամ մատնահետքի ապացուցողական նշանակությունը պայմանավորված է դրանց նյութական գոյությամբ, ապա BCI-ների կամ fMRI-ի միջոցով ստացվող տեղեկության արժեքը ձևավորվում է ոչ այնքան կենսաբանական կրիչի, որքան այդ կրիչից «կարդացվող» ճանաչողական բովանդակության հաշվին: Այստեղ պետությունը պարզապես չի արձանագրում մարմնական վիճակ, այլ ձգտում է պարզել, արդյո՞ք անձը ճանաչում է որոշակի առարկա, հիշում է կոնկրետ իրադարձություն, ունի՞ արդյոք իր մտավոր ոլորտում մեղադրանքի համար կարևոր տեղեկատվություն: Հենց այս պատճառով մի շարք հեղինակներ հիմնավոր կերպով պնդում են, որ նման տվյալները իրենց բնույթով ավելի

մոտ են ցուցմունքային ապացույցներին, քան «կամքից անկախ» գոյություն ունեցող կենսաբանական հետքերին:

Սակայն հակադիր մոտեցումն էլ ամբողջությամբ անհիմն չէ: Իրապես, նեյրոտեխնոլոգիաների միջոցով ստացվող որոշ արձագանքներ կարող են կրել ավտոմատ, ոչ կամային և ֆիզիոլոգիական բնույթ, ուստի առաջին հայացքից դրանք կարելի է համեմատել այնպիսի ապացույցների հետ, որոնց ստացումը, ըստ Saunders և O'Halloran and Francis գործերով ձևավորված մոտեցման, ինքնին չի խախտում ինքնամեղադրանքի դեմ պաշտպանության իրավունքը: Այս տրամաբանությամբ, նեյրալ արձագանքը կարող է ներկայացվել ոչ թե որպես անձի «խոսք», այլ որպես օրգանիզմի արձագանք արտաքին գրգռիչին: Այնուամենայնիվ, խնդիրը միայն այն չէ, որ արձանագրվում է ուղեղային ակտիվություն, այլ այն, որ այդ ակտիվությունից վերակառուցվում է անձի ներքին գիտելիքը կամ հիշողությունը: Այդ պահից սկսած սահմանը ֆիզիկական ապացույցի և ցուցմունքի միջև այլևս հստակ չէ: Բացի այդ, ժամանակակից գրականությունը զգուշացնում է, որ անգամ տեսականորեն բարձր ճշգրտության պայմաններում հիշողության վրա հիմնված նեյրոապացույցները մնում են սահմանափակ իրենց կիրառելիությամբ, ենթակա են սխալ մեկնաբանման [9]:

Վերջապես BCI-ների, fMRI-ի կամ այլ նեյրոտեխնոլոգիաների միջոցով ստացվող տվյալների և ապացույցների դասակարգումը պետք է լուծվի օրենսդրի և դատարանների կողմից՝ հստակ և կանխատեսելի չափանիշների ձևավորման միջոցով: Սակայն մինչ դրանց նորմատիվ դասակարգումը անհրաժեշտ է ամրագրել համապատասխան երաշխիքներ՝ անձանց իրավունքների լուրջ խախտումներից խուսափելու նպատակով: Հակառակ դեպքում, առկա է վտանգ, որ տեխնոլոգիական հնարավորությունը կսկսի թելադրել իրավունքի սահմաններ: Եթե իրավական համակարգը թույլատրի պետությանը ներթափանցել մարդու հիշողության, ճանաչման կամ մտածողության ներքին տիրույթ, ապա հաջորդ հարցը լինելու է ոչ թե՝ կարելի՞ է արդյոք դա անել, այլ՝ որտե՞ղ է այդ միջամտության թույլատրելիության սահմանը: Հենց այստեղ է առաջանում «մտավոր գաղտնիության» և ընդհանրապես մտավոր ինքնավարության պաշտպանության հրամայականը: Համապատասխան երաշխիքների բացակայության պայմաններում այս սահմանը գծվելու է շատ ավելի հեռու, քան թույլատրում է անձի և արդարադատության շահը:

Առնվազն անհրաժեշտ է հստակ ամրագրել, որ նման հետազոտություններին ենթարկվելը կարող է իրականացվել բացառապես կամավոր հիմունքներով: Միևնույն ժամանակ չի բացառվում, որ նման հետազոտությունից հրաժարումը որոշ հանգամանքներում կարող է հետևությունների հիմք դառնալ, ինչպես երբեմն գնահատվում է անձի լռությունը: Սակայն նման գնահատումը կարող է լինել ընդունելի միայն այն դեպքում, երբ մեղադրյալին ընձեռնված է դատարանում հրաժարման պատճառների ներկայացման իրական և արդյունավետ հնարավորություն:

Բացի այդ, անհրաժեշտ է հստակ սահմանել հետազոտության ընթացքում կիրառվող հարցադրումների թույլատրելի շրջանակը, ինչպես նաև պաշտպանության կողմի համար ապահովել վերլուծական և մեկնաբանական մեթոդների թափանցիկություն ու մատչելիություն: Տեխնոլոգիայի կիրառման ողջ գործընթացը պետք է բնութագրվի բարձր թափանցիկությամբ: Դրա տեխնիկական պարամետրերը, ալգորիթմները և կիրառման պայմանները պետք է հասանելի լինեն ինչպես դատարանին, այնպես էլ դատավարության բոլոր կողմերին: Վերջապես, հետազոտության արդյունքները պետք է ներկայացվեն ամբողջական և քննադատական վերլուծության ուղեկցությամբ. եզրակացությունը պարտադիր պետք է արտացոլի կիրառված մեթոդների սահմանափակումները, հնարավոր սխալների աղբյուրները և այն անորոշությունները, որոնք կարող են ազդել արդյունքների հավաստիության վրա: Ավելին, համապատասխան մասնագետները պետք է հասանելի լինեն դատարանի համար՝ եզրակացությունների վերաբերյալ մասնագիտական գնահատականներ տալու, դրանք պարզաբանելու և վիճարկելու հնարավորությունն ապահովելու նպատակով:

Եզրակացություն

Վերոգրյալ ուսումնասիրությունից պարզ են դառնում ոչ միայն լռելու և ինքնամեղադրանքի դեմ պաշտպանության հայեցակարգերում առկա իրավական անորոշությունների առկայությունը, այլև ավելի խորքային խնդիրներ՝ պայմանավորված արդար դատաքննության դասական կառուցվածքի վերախմաստավորման անհրաժեշտությամբ: Ներդրությունները պարզապես չեն հարստացնում ապացուցողական գործիքակազմը, այլ տեղաշարժում են լռելու իրավունքի և ինքնամեղադրանքի

Գրականության ցանկ

1. Funke v. France, no. 10828/84, European Court of Human Rights, judgment of 25 February 1993
2. Saunders v. the United Kingdom, no. 19187/91, European Court of Human Rights, judgment of 17 December 1996
3. Bykov v. Russia [GC], no. 4378/02, § 92, ECHR 2009.
4. John Murray v. the United Kingdom, no. 18731/91, European Court of Human Rights, judgment of 8 February 1996.
5. O'Halloran and Francis v. the United Kingdom [GC], nos. 15809/02 and 25624/02, § 47, ECHR 2007.
6. Kemper, Carolin: Technology and Law Going Mental: Threads and Threats of Brain-Computer Interfaces, VerfBlog, 2020/8/31, <https://verfassungsblog.de/technology-and-law-going-mental/>, DOI: 10.17176/20200831-183827-0.
7. Kilbride, M. & J. Iuliano (2015). 'Neuro Lie Detection and Mental Privacy' in Maryland Law Review 75(1): 163-193

8. Ryan A. Chang, “Brain-Computer Interfaces at the Intersection of Innovation and U.S. Constitutional Law: A Literature Review and Case Law Perspective,” *Athens Journal of Law* 12 (2025): 1–17, <https://doi.org/10.30958/ajl.X-Y-Z>
9. Emily R D Murphy, Jesse Rissman, Evidence of memory from brain data, *Journal of Law and the Biosciences*, Volume 7, Issue 1, January-June 2020, Isaa078, <https://doi.org/10.1093/jlb/Isaa078>

THE RIGHT TO SILENCE AND PROTECTION AGAINST SELF- INCRIMINATION IN THE CONTEXT OF EMERGING TECHNOLOGIES

Abrahamyan A.

This article is devoted to reconsideration of the right to remain silent and the privilege against self-incrimination in the context of contemporary technological developments. The analysis focuses on the impact of neurotechnologies, particularly brain-computer interfaces and functional magnetic resonance imaging (fMRI), on the fundamental principles of criminal proceedings. The article examines the approach developed in the case law of the European Court of Human Rights, according to which the privilege against self-incrimination does not extend to evidence that exists independently of the will of the individual and analyzes the extent to which neural data may be classified within this category.

Particular attention is paid to the fact that neurotechnologies make it possible to obtain not only physiological information but also data capable of carrying testimonial content, thereby calling into question the traditional distinction between physical evidence and testimony. The paper presents and evaluates opposing scholarly viewpoints and demonstrates that the existing legal uncertainty cannot be resolved without the development of fundamentally new approaches.

In conclusion, the author proposes key legal safeguards aimed at protecting mental autonomy and “mental privacy,” emphasizing that, without their formal recognition and protection, the right to remain silent and the privilege against self-incrimination may lose their practical significance.

Keywords: *right to remain silent, privilege against self-incrimination, fair trial, neurotechnologies, brain-computer interface, functional magnetic resonance imaging, mental privacy.*

ПРАВО НА МОЛЧАНИЕ И ЗАЩИТА ОТ САМООБВИНЕНИЯ В КОНТЕКСТЕ НОВЕЙШИХ ТЕХНОЛОГИЙ

Абрамян А. В.

Настоящая статья посвящена переосмыслению права на молчание и привилегии против самооговора в условиях современных технологических изменений. В центре анализа находятся вопросы влияния нейротехнологий, в частности интерфейсов «мозг–компьютер» и функциональной магнитно-резонансной томографии, на фундаментальные принципы уголовного судопроизводства.

В статье раскрываются особенности подхода сформированного в практике Европейского суда по правам человека, согласно которому привилегия против самооговора не распространяется на доказательства, существующие независимо от воли лица, и анализируется, в какой мере нейроданные могут быть отнесены к данной категории. Особое внимание уделяется тому, что нейротехнологии позволяют получать не только физиологическую информацию, но и данные, способные нести показательное (свидетельственное) содержание, что ставит под сомнение традиционное разграничение между материальными доказательствами и показаниями.

В работе освещаются противоположные научные позиции, дана их оценка и показано, что существующая правовая неопределённость не может быть преодолена без выработки принципиально новых подходов. В заключительном разделе статьи предлагаются ключевые правовые гарантии, направленные на защиту ментальной автономии и «ментальной приватности», подчёркивая, что без их закрепления, права на молчание и привилегия против самооговора могут утратить своё практическое значение.

Ключевые слова: право на молчание, привилегия против самооговора, справедливое судебное разбирательство, нейротехнологии, интерфейс «мозг–компьютер», функциональная магнитно-резонансная томография, ментальная приватность.

Ներկայացվել է խմբագրության՝ 17.02.2026

Ընդունվել է տպագրության՝ 12.05.2026